ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետության կառավարության և Ռուսաստանի Դաշնության կառավարության միջև արտադրական կոոպերացիայի մասին

Հայաստանի Հանրապետության կառավարությունը և Ռուսաստանի Դաշնության կառավարությունը, այսուհետ՝ Կողմեր,

ղեկավարվելով 1993 թվականի դեկտեմբերի 23-ի «ԱՊՀ մասնակից պետությունների ձեռնարկությունների և ճյուղերի արտադրական կոոպերացիայի զարգացման ընդհանուր պայմանների և աջակցման մեխանիզմի մասին» Համաձայնագրով նախատեսված սկզբունքներով,

կարևորելով տնտեսական համագործակցության հետագա զարգացումը՝ ի շահ երկու պետությունների,

ձգտելով կոոպերացիայի հիման վրա ապահովել բարենպաստ պայմաններ համատեղ ծրագրերի մշակման և իրականացման, փոխշահավետ տնտեսական կապերի զարգացման և կատարելագործման համար,

համաձայնեցին ներքոհիշյալի մասին.

Հոդված 1

Կողմերը կաջակցեն ձեռնարկությունների միջև, անկախ սեփականության ձևերից, ուղիղ արտադրական կապերի և իրենց մասնագիտացման հիման վրա արտադրական կոոպերացիայի իրականացմանն ու զարգացմանը:

Հոդված 2

Սույն Համաձայնագիրը կիրառվում է համատեղ միջպետական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ ապրանքների (ծառայությունների) առանձին տեսակների մատակարարման, ինչպես նաև, Կողմերի համաձայնությամբ, կարևորագույն հատուկ լրակազմող հանգույցների և սպառող պետությունում չարտադրվող ու վերջնական արտադրանքի պատրաստման համար օգտագործվող որոշ տեսակի արտադրանքի նկատմամբ:

Կոոպերացված մատակարարումների անվանացանկը և ծավալները, ինչպես նաև տվյալ մատակարարումները իրականացնող տնտեսավարող սուբյեկտները որոշվում են համապատասխան տարվա համար Կողմերի միջև ստորագրվող արձանագրություններով:

Հոդված 3

Արտադրական կոոպերացիայով մատակարարվող և Կողմերի միջև ստորագրվող ամենամյա արձանագրություններում ընդգրկվող ապրանքները (ծառայությունները) չեն հարկվելու ավելացված արժեքի և ակցիզային հարկերով:

Հոդված 4

Երկու պետությունների նախարարությունները և գերատեսչությունները անհրաժեշտության դեպքում կարող են կնքել երկկողմ ճյուղային համաձայնագրեր՝ նշելով արտադրության մասնագիտացումը պահպանող կազմակերպությունների անունները, արտադրական կոոպերացիայի շրջանակներում Կողմերի միջև ստորագրվող ամենամյա արձանագրությունների անվանացանկում և ծավալներում չընդգրկված ապրանքների (ծառայությունների) մատակարարման մասին, որոնք ենթակա են հարկման ավելացված արժեքի և ակցիզային հարկերով՝ համաձայն Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության օրենսդրությունների:

Հոդված 5

Սույն Համաձայնագրի շրջանակներում ապրանքների (ծառայությունների) մատակարարումները իրականացվում են հայկական և ռուսաստանյան տնտեսավարող սուբյեկտների (անկախ սեփականության ձևերից) միջև պայմանագրերի (գործարքների) հիման վրա՝ կիրառելով պայմանագրային գներով փոխհաշվարկները:

Պայմանագրերի (գործարքների) կատարման պատասխանատվությունը կրում են դրանք կնքող տնտեսավարող սուբյեկտները:

Հոդված 6

Սույն Համաձայնագրի շրջանակներում արտադրական կոոպերացիայով առաքվող ապրանքները ենթակա չեն վերաարտահանման երրորդ երկրներ, եթե Կողմերը չպայմանավորվեն այլ բանի մասին: Տվյալ դեպքում այդպիսի պայմանավորվածությունը կգրանցվի սույն Համաձայնագրի 2-րդ հոդվածով նախատեսված արձանագրություններում:

Հոդված 7

Սույն Համաձայնագրի մեկնաբանման և կիրառման հետ կապված վեճերը Կողմերի միջև լուծվում են խորհրդակցությունների և բանակցությունների միջոցով:

Հոդված 8

Սույն Համաձայնագրում փոփոխությունները և լրացումները կատարվում են Կողմերի գրավոր համաձայնությամբ և ձևակերպվում են առանձին արձանագրություններով, որոնք հանդիսանում են Համաձայնագրի անբաժանելի մասը և ուժի մեջ են մտնում սույն Համաձայնագրի 10-րդ հոդվածով նախատեսված կարգով:

Հոդված 9

Սույն Համաձայնագրի դրույթները չեն շոշափում Կողմերի՝ այլ միջազգային պայմանագրերից բխող իրավունքները և պարտավորությունները, որոնց մասնակիցներ են նրանք:

Հոդված 10

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի կողմից դրա համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերի կատարման մասին վերջին գրավոր ծանուցագրի ստացման օրվանից:

Սույն Համաձայնագիրը կնքվում է 3 տարի ժամկետով և ինքնաբերաբար կերկարաձգվի հետագա 3 տարիների համար, եթե Կողմերից մեկը ոչ պակաս, քան 6 ամիս առաջ մինչև համապատասխան ժամկետի ավարտը մյուս Կողմին գրավոր չծանուցի Համաձայնագրի գործողությունը դադարեցնելու իր մտադրության մասին:

Կատարված է Մոսկվա քաղաքում 1999 թվականի դեկտեմբերի 7-ին, երկու բնօրինակով, յուրաքանչյուրը՝ հայերեն և ռուսերեն, ընդ որում երկու տեքստերն էլ հավասարազոր են:

Համաձայնագիրն ուժի մեջ է մտել 2000 թվականի դեկտեմբերի 5-ից: